

## ԱՐԵՎՍՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՒՄՔ Երկուշաբթի, 30 Յունիսի, 2008

Միացեալ Նահանգների նախագահական թեկնածու դեմոկրատական Բարաք Օբամայի օգտին, Երեքշաբթի, Յունիսի 24-ին, Լոս Անջելոսում տեղի է ունեցել դրամահաւաքի կարեւոր ձեռնարկ, որին մասնակցել է նաեւ «Հայերը Օբամայի համար» կազմակերպութիւնը: Միջոցառումը առիթ է հանդիսացել Օբամային ծանօթացնելու Լոս Անջելոսում եւ շրջակայքում հաստատուած ու գործող կէս միլիոն հայերի հարցերին: «Ամերիկահայութիւնը պատրաստ է աջակցելու Օբամայի իւրաքանչիւր քայլին, որպէսզի հնարաւոր լինի նրան Սպիտակ Տուն հասցնել: Քաջալերական է տեսնել, որ մեր համայնքից մեծ թուով հանրապետականներ, դեմոկրատականներ եւ անկուսակցականներ միացել են նեցուկ կանգնելու Սենատոր Օբամային», ասել է «Հայերը Օբամայի համար» կազմակերպութեան ատենապետուհի Նորա Յովսէփեանը, որը հաւաքի ընթացքում զրուցել է Օբամայի հետ, դրուատելով Հայոց Ցեղասպանութեան ճանաչման հարցով նրա որդեգրած ազդու դիրքորոշումը եւ թուրքիայի ու Ադրբեջանի կողմից Հայաստանի վրայ պարտադրուած տնտեսական շրջափակումը վերցնելու նրա տարած աշխատանքը: Սենատոր Օբաման խոստացել է շարունակել այդ հարցերի հետապնդումը եւ երախտագիտութիւն է յայտնել ամերիկահայութեան կողմից իրեն ցուցաբերուած նեցուկի համար:



Շաբաթ, Յունիսի 28-ի երեկոյեան, CBS-ի կենտրոնում տեղի է ունեցել Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Նաւասարդեան 33րդ Մարզախաղերի յաղթանակի հաւաք-ճաշկերոյթը աւելի քան 700 հիւրերի մասնակցութեամբ: Ձեռնարկի հանդիսավար, ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի ղեկավարներից՝ Ռաֆֆի Համբարեանը իր բացման խօսքում ներկայացրել է օրուայ պաշտօնական հիւրերին, որոնց թւում էին Արեւմտեան Թեմի առաջնորդ Մուշեղ արք. Մարտիրոսեանը, Լոս Անջելոսում Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոս Արմէն Լիլոյեանը, Միացեալ Նահանգների Ներկայացուցիչների Տան անդամ, կոնգրեսական Բրեդ Շէրմընը, Հ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յակոբ Թիւֆէնքեանը, Կալիֆորնիայի Նահանգային Խորհրդի անդամներ Անթընի Փորթնէջիսօն եւ Փօլ Գրիգորեանը: Միջոցառմանը ելոյթ է ունեցել Հ.Մ.Ը.Մ.-ի Արեւմտեան Ամերիկայի Շրջանային Վարչութեան ատենապետ Սթիւ Արթինեանը, որն անդրադարձել է Հ.Մ.Ը.Մ.-ի ստեղծման պայմաններին եւ աշխարհի ամբողջ տարածքում, այդ թւում՝ Արեւմտեան Ամերիկայի շրջանում արձանագրած յաջողութիւններին: Սթիւ Արթինեանը յայտարարել է, որ Հ.Մ.Ը.Մ.-ի Նաւասարդեան տարեկան մարզախաղերին մասնակցում են 300-ից աւելի մարզական խմբեր եւ 4000 երիտասարդ մարզիկներ: Միջոցառմանը ելոյթ է ունեցել նաեւ կոնգրեսական Բրեդ Շէրմընը, որը դրուատելով Հ.Մ.Ը.Մ.-ի ծաւալած գործունէութիւնը, շեշտել է, որ իբրեւ Սան Ֆերնանդօ Հովիտի շրջանը ներկայացնող կոնգրեսական, ինքը 12 տարուց ի վեր պայքարում է վերացնել Հայաստանի դէմ հաստատուած թուրքական շրջափակումը եւ լուրջ աշխատանք է տանում Հայոց Ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ:



Իսկ Շաբաթ, Յունիսի 7-ին, Սան Դիագոյի Սբ. Յովհաննու Կարապետ եկեղեցւոյ սրահում նշուել է Հ.Մ.Ը.Մ.-ի Սան Դիագոյի «Սեւան» մասնաճիւղի 25-ամեակը, մեծ թուով Հ.Մ.Ը.Մ.-ականների եւ համակիրների մասնակցութեամբ: Միջոցառմանը ելոյթ է ունեցել կազմակերպիչ յանձնախմբի ատենապետ Էմիլ Մաղաքեանը, որն անդրադարձել է Հ.Մ.Ը.Մ.ի «Սեւան» մասնաճիւղի ազգանպաստ գործունէութեանը: Սան Դիագոյի համեմատաբար փոքրաթիւ հայ համայնքում: Միջոցառմանը տեղի է ունեցել մասնաճիւղի 25-ամեակը յատկանշող մոմավառութիւն, որին հետեւել է ժողովրդական խրախմբանք:



Գլենդէլ - Կապան քոյր քաղաքների միութեան աշխատանքներին իր նպաստը բերելու նպատակով, Գլենդէլի համայնքային քոլէջի հայ ուսանողների միութիւնը եւ քոլէջի

ուսանողական միութիւնը 4620 դոլար են նուիրել՝ Կապանի ճարտարագիտական համալսարանում համակարգչային գրադարանի հինադրման համար: Սոյն գումարը Յունիսի 23ին պաշտօնապէս յանձնուել է Գլխնտէլ-Կապան քոյր քաղաքների միութեան նախագահ՝ Արթին Մանուկեանին: Նշենք, որ Գլխնտէլի համայնքային քոլէջի եւ Կապանի ճարտարագիտական համալսարանի երկամեայ համագործակցութեան շրջանակում նախատեսուում է կազմակերպել ուսանողական փոխայցելութիւններ:



Ուրբաթ, Յունիսի 20-ին, Գլխնտէլին մերձակայ Լա Քրազենթայի Հայ Կենտրոնում տեղի է ունեցել Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան Լա Քրազենթայի «Զարթօնք» մասնաճիւղի կազմակերպած բանաստեղծական ու երաժշտական երեկոն, որին մասնակցել են բազմաթիւ ամերիկահայ երիտասարդներ: «Միտքդ արտայայտի՛ր» խորագրով սոյն միջոցառմանը ասնունքներով, երաժշտական կատարումներով ու հայկական պարերով հանդէս են եկել 15-ամեայ Թալին Նալբանդեանը, Աւօ եւ Արմանդ Քամբուրեան եղբայրները, 14-ամեայ Հուրի Մինոյեանը, Լարա Փանոսեանը եւ ուրիշներ: Միջոցառմանը ցուցադրուել է նաեւ Հ.Ե.Դ.-ի անդամների մասնակցութեամբ Լեռնային Դարաբաղի համայնքային կենտրոնի նորոգութեան աշխատանքները նկարագրող տեսաժապաւէն:



Երեքշաբթի, Յունիս 3-ի առաւօտեան ժամը 11-ին, «Արարատ» Տարեցների Տանը նշուել է արդէն իսկ աւանդութիւն դարձած Հայ Օգնութեան Միութեան Օրը: Մեծ թուով ՀՕՄ-ուիիներ, «Արարատ» Տան տարեցներ եւ հիւրեր ներկայ են գտնուել սոյն ձեռնարկին, որի հովանաւորութիւնը ստանձնել էր ՀՕՄ-ի Արեւմտեան Ամերիկայի Շրջանային վարչութիւնը, ՀՕՄ-ի մասնաճիւղերի մասնակցութեամբ: Միջոցառմանը յատուկ գնահատանքի են արժանացել «Արարատ» Տարեցների Տանը հաստատուած վաստակաշատ ՀՕՄ-ուիիներ՝ Ազատուիի Դանիէլեանը եւ Օֆելիա Գոյունճեանը, ովքեր երկար տարիներ ծառայել են ՀՕՄ-ի Յունաստանի եւ Բրիտանիայի մասնաճիւղերում:

Այս լուրերը տրամադրուում են  
ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի  
Կեդրոնական Կոմիտէի  
Հանրային Կապի Գրասենեակի կողմից  
ARF Central Committee  
Office of Public Relations  
Contact Person: Saro Nazarian  
[PublicRelations.ARF@hotmail.com](mailto:PublicRelations.ARF@hotmail.com)  
Tel: (818) 243-7059  
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:  
Լուրերը կարելի է վերահրատարակել: